

Այն մարդիկ, որոնք կոպիտ միօրինակութեամբ ծիծաղում էին իմ գաղափարների վրայ, որպէս անիրագործելի չափազանցութիւնների վրայ, այն տղամարդիկ, որոնք ծաղրում էին ինձ (սրտի խորքում զգալով իրանց մեղքը)... կը դադարեն մի րոպէ ծիծաղելուց, երբ կ'իմանան այս...

Եւ գուցէ մաքուր և նուրբ զգացմունքով կանայք, կարողով իմ ճակատագրի մասին... կը սկսեն ինձ նման մտածել... գուցէ կ'ապրեն իմ կեանքով և կը տանջուեն իմ տանջանքով...

Եւ եթէ ինձ յաջողուի գէթ մի փոքրիկ քար դնել մաքուր, ողջախոհ ապագայի հրաշալի շէնքի համար... այդ դէպքում արժէ իմ կեանքը զոհել:

Գերման. Թարգմ. տիկինն Հրանդշ.

ԹՈՒՐԹՕ-ՔՐԴԱԿԱՆ ԱՐՇԱԽՆՔԻ ՔՄՆԵՒՀԻՆԳԱ-  
ՄԵԱԿԸ

1880—1905

Վ

Միւս առաւօտ մեր քարավանը արդէն կազմու պատրաստ ճանապարհ ընկաւ դէպի Վան: Մեր քուրդ մահմանդարը ջուկատ մի ձիաւորներով մեզ ուղեկից եղաւ մինչև Մար-Իշոյի հինաւուրց վանքը՝ Շամզդինանից 7—8 ժամ հեռավորութեամբ, ուր իր աթոռն ունի Ասորոց Մաթրոնը, Մարշիմոնի փոխանորդը, որ թէև աստիճանով կաթուղիկոսից վար է, բայց եկեղեցական պաշտօնով նրանից բարձր է իր նշանակութիւնը, քանզի նա է օծում կաթուղիկոսին հանդիսաւոր ծիսակատարութեամբ և ասորոց թէ քրդաց մօտ մեծ հեղինակութիւն է վայելում:

Հոն հասնելով մահամարդարը և իր հետևորդները առատօրէն պարգևատրուելով մեկնեցան, իսկ մենք գիշերեցիք վանքում: Նահապետական պարզութեան մէջ ապրող, աշխարհից անջատուած 80 ամիայ, առոյգ և քաջառողջ ծերունափայլ կրօնաւորը մեծ ուրախութեամբ և սիրալիւր մեզ ընդունեց: Նա արտասուելու հափ յուզուեց երբ տեղեկացաւ որ ինկիլիշի կոնսուլն էր իր գլխաւոր հիւրը: Որչափ մեծ պատիւ դառամեալ ծերունուն համար, որի աչքերը հոգնել, մթնել էին սպասելով երկար, աղէտալի տարիների շարքում և ընթացքում մի այսպիսի բարձրաստիճան հիւրի այցելութեանը: Սա էլ թուրքերէն բոլորովին չէր իմանում, և մենք պիտի չկարողանայինք նրա հետ տեսակցիլ և խօսակցել եթէ բարեբախտաբար Մար-Շիմօնի մարդիկներից մինը գործով այնտեղ գտնուելով թարգմանի պաշտօն չկատարէր: Խօսակցութիւնը օրուայ վառ հարցի մասին էր—քրդական խլրտուսները և շարժումները բարի ծերունու էլ լուրջ ուշադրութիւնը գրաւել էին և նա որ ականատես էր եղել Պետրխան ըէգի արիւնահեղ արշաւանքներին, սոսկալի կոտորածներին և վանդալական թալանին, իբր 40 տարիներ առաջ, սրտաւորով նայում էր օրուայ մեծ հարցին վրայ:

Հիւպատոսը հարցրեց նրա կարծիքը ի մասին շէյխի նպատակին ու ծրագրին. Մաթրոնը նախ հաստատեց որ մի ինչ որ արտասովոր շարժումներ կան քրդաց միջև, թէ Շէյխը իր մօտ է հրաւիրել բոլոր քուրդ աշիրաթների Հլաղասի-նե-րին—ցեղապետներին խորհրդակցելու, ի մօտոյ կատարուելիք մի արշաւանքի մասին, բայց թէ այդ խորհրդակցութիւնները խիստ գաղտնի են պահուում: Գալով այն կէտին թէ ճիշտեղ և ճշմ վրայ են յարձակուելու նրանք, Մաթրոնը ասեց որ ինքը ամենայն վստահութեամբ կարող է եզրակացնել թէ քրդերը կը յարձակուեն նախ հայերի վրայ Վանում և շրջակայներում և նրանց հետ իրանց հաշիւը վերջացնելուց յետոյ նրանք կ'արշաւեն Ասորոց, վրայ որոնք ցանուցրիւ բնակուած են Տիորի, Դիսումա, Բադ, Տէզ, Ճէլօ, Լէին և Ջուլամէրիկ գաւառներում, և թէ արշաւանքից յետոյ կը հաստատուի քրդական իշխանութիւն ընդ հովանեաւ և գերիշխանութեամբ սուլթանին, որին շատ ցանկալի էր այդպիսի մի բան եւրոպական միջամտութեանց և ոտնձգութեանց թիւրքիայում դրանով վերջ ու վախճան տալու, որպէս այդ տեսակ մի բան արդէն կատարուած է եղել Եգիպտոսում: Պատկառելի ծերունին խօսում էր փորձառութեամբ ու մեծ հմտութեամբ և նրա խօսքերը մեծ տպաւորութիւն թողեցին թագուհու ներկայացուցչի մտքին վրայ: Նա

համոզուեց որ Շէյխը խաբել էր նրան պարզապէս, իր պերճախօս ճառերովը թագնելով ամենայն ճարպիկութեամբ նրանից իր գաղտնի մտքերն ու նպատակները և արգելելով նրան թափանցել իր դիտաւորութիւնների խորը։ Դրութիւնը լուրջ էր և հարկ անհրաժեշտ էր մի կերպով լուր հասցնել Պոլիս դեսպանին, բայց դա բոլորովին անհնար էր այս ամայի լեռանց գլխներում, ուր նա թափառում էր։ Ուստի և նա որոշեց կարելի եղածին արագօրէն վերադառնալ Վան։ Գիշերը շատ երկար նստեցինք և խօսակցութիւնը շարունակուեց գրեթէ մինչև հաւաթօսին։ Մաթրոնը պատմում էր սոսկալի մանրամասնութիւններ 1842 թ. մեծ կոտորածից, որից ինքը մազապատուրծ յաջողել էր լինել մի կերպով։ Քրդերի անխղճութիւնը նամարմացած անգթութիւն էր անուանում։ Ազատ լեռնական ծերուկը առանց կեղծ փոխթիկայի անվախ և համարձակ կերպով Անգլիացոց երեսին շարունակ նրանց գործած մի մեծ, աններելի սխալը զոր նա «անքաւելի ոճիք» անուանեց, այսինքն այն մեծ սխալը, զոր նրանք գործեցին Լորդ Պալմստոնի օրով, յորժամ պատահել էր ասորոց մեծ ջարդը, թոյլ տալով սուլթանին մարսել այդ թափուած գետերով արիւն արցունքը մի հինաւուրց անպաշտպան քրիստոնեայ ժողովրդեան, որ իր յոյսը դրած էր միայն Մեծ Բրիտանիոյ վրայ։ և չնչին բաներով գոհացում ստացած համարեցին ինքզինքնին, առանց մի որևէ հիմնական բարեփոխում առաջ բերելու խեղճ, թշուառ, նահատակուած, արիւնաքամ և քարուքանդ եղած ասորի ժողովուրդի անտանելի վիճակին մէջ, որը յետոյ եղաւ «իտին քանդառաջինը չար»։ Նա խօսում էր մեծ յուզմամբ, կարելի է ասել մինչև իսկ արդար զայրոյթով, նա յիշեց 1862 Լիբանանի մեծ ջարդերը և բաղդատութեան դրեց Ֆրանսան Մեծին Բրիտանիոյ հետ, պատմելով թէ ինչպէս Նապոլէօն III կայսրը մի ստուար բանակ և նաւատորմիդ ուղարկելով Լիբանան, զրաւել տուեց Բերութ ծովային քաղաքը, ստիպելով սուլթանին, որ ահաբեկուած էր այդ հզօր սիրիական ցոյցից, արդարութիւն ընել թերևս իր կեանքում առաջին ու վերջին անգամն լինելով (ինչպէս նաև օսմանեան տարեգրութեանց ու պատմութեան մէջ) բառի բուն և լիակատար նշանակութեամբը. այն է որ ջարդի գլխաւոր հեղինակները ու թալանի պարագլուխները մի առ մի բռնուելով կախաղանի վրայ հանուեցին ի խրատ այլոց։ Իսկ Լիբանանում հաստատուեց նոր, ինքնօրէն կառավարութիւն ընդ հովանեաւ գլխաւորապէս Ֆրանսայի և ապա նաև միւս պետութեանց։ Գոնէ, յարեց բարի ծերունին հառաչելով, թափուած անմեղ արեան փոխարէն և շնորհիւ Նապոլէօնի՝ Լիբանանի մնացած

բնակիչները մի անգամ ընդմիջտ ազատուեցին անիրաւ, անսիրտ և անխիղճ սուլթանների անողոք ճիրաններից. իսկ Մեծըն Բրիտանիան մեզ, խղճալի ասորիներիս, թողեց միևնոյն վայրենի, ծանր լուծին՝ տակին և աւելի մի սոսկալի վիճակի մէջ թաղեց զմեզ մոռացութեան տալով յաւիտեան. վա՛յ կիդի դիւնիա, վա՛յ! (այսպէս թարգմանեց երիտասարդ ասորին ծերունու ցաւագին բացականչութիւնը, որի համանիշը կը լինէր Յիզեոնի *O tempora! O mores!*—ը—Ո՛վ ժամանակներ և ո՛վ բարքեր):

Հիւպատոսը լուռ ու մունջ մտիկ էր տալիս բարի ծերունու այս հետաքրքիր ճառին: Նա զգացուած էր ակներե, դի նրա սիրտը վկայում էր անխօս կերպով արտասանուած ճառի կատարելապէս և մի սոսկալի ճշմարտութիւն լինելուն: Բայց էլի նա ցանկացաւ մխիթարել և յուսադրել ծերունազարդ և հայրենասէր կրօնաւորին, ուստի նրան էլ յայտնեց Կ. Պոլիս քաղաքում համախմբուած դեսպանաժողովի մասին և թէ ինչ յոյսեր կային թուրքիայում քրիստոնեայ ազգերի վիճակը բարելաւելու մասին: Սակայն փորձառու Մաթրոնը համարեա թէ ոչ մի կարեւորութիւն տալ չթուեց մեր կոնսուլի այդ յայտարարութեան. այլ մօրուքը շոյելով մտախոհ կերպով պատասխանեց.

—Այդպիսի դեսպանաժողովներ և կօնգրեսներ մենք շատ ենք տեսել մեր թշուառ կեանքում, բայց ոչ մի էական փոփոխութիւն, այլ ինչպէս թուրքերէն միառած ասում է «Լիինէ էսկի համամ, էսկի թաս»—դարձեալ միշտ միևնոյն բաղնիքը և միևնոյն ջրի թասը: Այս ալ կայ որ ընդհանրապէս շատ խօսողները շատ քիչ կը գործեն. ապա տեսէք Նապոլէօնը, նա որչափ քիչ խօսեց, սակայն ինչ մեծ գործ տեսաւ, որով դարուցի դուրս իր անունը անմահացած է այնպէս որ մինչև իսկ այս լեռների խորքերում ալ այսօր մենք նրան յիշում ենք:

Այլևս խօսք չկար ասելու ուստի և մենք սկսանք յօրանջել քնատութիւնից. ծերունին վեր կացաւ ասելով մեզ.

—Դուք հոգնած էք և կէս գիշերն էլ անց է կացել, պէտք է որ հանգստանաք ու մի քիչ էլ քնէք, որպէսզի կարողանաք շարունակել ձեր ճամբան. ու իր սենեակը մեր տրամադրութեան տակ թողնելով ու մեզ բարի գիշեր մաղթելով հեռացաւ ձէթի ճրագը ձեռքին:

Մտախոհ էր Կօնսուլը և տխուր, ուստի առանց մի խօսք ասելու անկողին մտաւ: Բիշ յետոյ ամենքս ալ Մորփէոսի գրուկուն էինք:

## VI

Արեղակի սուր ճառագայթները մեր խուցի նեղլիկ լուսամուտներից ներս թափանցելով փայլուն սիւններ էին կաղմել, երբ մենք արթնացանք և խեղճ ճանապարհ ընկանք: Ծերունի Մաթրոնը մինչև վաղի դրսի դուռը մեզ ուղեկցեց և ասորերէն լեզուով «Տէր ուղղեա» մընջեց: Մենք ձիերներս հեծնելով հեռացանք: Ծանապարհին մենք յաճախ պատահում էինք հետևակ և ձիաւոր և ոտից գլուխ զինուած ըրդերի, որոնք խեթիւ մեզ նկատում էին և անպատճառ կը կողոպտէին զմեզ, կթէ կառավարութիւնը մեզ մի քանի կտրիճ հեծելազօրք տուած չըլինէր, որոնք լիքը հրացանները ի ձեռին առաջուց և յետևից մեզ ուղեկցում էին: Երեկոյեան մենք հասանք սուրբ Բարթողիմոսի հինաւորաց վանքը, որ հեռուից ամրոցի նմանում էր իր հաստ պարիսպներով ու աշտարակներով. միայն սիրուն զմբեթից և բարձր զանգակատնից յայտնւում էր որ դա մի վանք էր բլուրի մի գլխին կառուցուած: Այնտեղ էր Կայծակը (Յովհ. վրպ. Բագունի) որ սիրալիր ընդունեց և հիւրընկալեց մեզ:

Մեծ սովի տարին լինելով Կ. Պոլսոյ Սովիւոց Յանձնաժողովի կողմանէ Սբ. Բարդուղիմոսի վանքում Աղբակի որբ և անտէրունչ երեխայից համար մի պատսպարան կառուցուած էր վանքի բակի մի անկիւնում, ուր 15-20 մանչերի հետ պարապում էր Կովկասից եկած մի երիտասարդ ուսուցիչ, պ. Զաքէ, որ յետոյ դարձաւ Բագարատ վարդապետ Թէվէքիւեան: Նա մի ժամանակ Սալմասի Դէրձգ վանքի վանահայր եղաւ և Կովկասում մեր հոգեւորականների ամենաշնորհալիներից, և իրենց բարձր կոչումն ու կարևոր պաշտօնը ըմբռնողներից ու ըստ այնում վարուողներից մինը հանդիսացաւ իր նախնուն և ազգագուտ գնահատելի գործունէութեամբ: Այն ժամանակից Հայոց Հայրիկը շատ էր սիրում այդ համեստ անձնանուէր գործիչին, այդ մի տիպար էր աշխատասիրութեան և անձնագոհ պարտաճանաչութեան: Նա Վասպուրականում, կարմրաշապիկ վարժապետ անունով, ամառ ձմեռ, տանը թէ փողոցում, ամեն տեղ և ամեն ժամանակ իր հագին ունեցած կարմիր շիլայ բլուղին պատճառով: Կարծես մի գարիբալդեան լինէր նա: Այնտեղ էր նաև Այվադեան Սահակ վարդապետը իբր փոխանորդ վանահօր, որ իր պաշտօնական հանգամանքին պատճառով միշտ Բաշկալայում պէտք էր բնակուէր:

Հինաւորաց այս հոյակապ վանքի մենք ամեն կողմը ման եկանք, բայց խիստ աղքատիկ և անշուք դրութեան մէջ գտանք

ամեն բան, վասն զի անցեալ աղէտալի մեծ պատերազմի միջոցին Համիդի բուրդ բաշխողութիւնները ամբողջովին կողոպտել ու թալանել էին նրան: Կայծակը պատմեց միզ ահաւոր պատմութիւնը: Եղիազար վարդապետի վանահայրութեան օրով էր, երբ մի օր յանկարծ 12 թաւուններ (քրդաց ազնուական դասակարգը այդպէս է կոչուում) դանազան ցեղերից հետեակ ու ձիաւոր զօրքով պաշարում են վանքը, ազատութեան ոչ մի յոյս չլինելուն վարդապետը անձնատուր է լինում պալմանաւ որ նըրանք խնայէին այնտեղ հաւաքուած հայ ժողովրդին որ վանքի անմիջապէս կից եղող համանուն գիւղից այնտեղ ապաստանել էր: Մեծ ցեղապետ և արշաւանքի հրամանատար Օմէր Ալան համաձայնուեց, և վանքի խոշոր դռները կոնակի վրայ բացուեցին նրանց առաջ: Քրդերը սովալլուկ գայլերի նման վրայ ներս խուժեցին և սկսեց անգութ թալանը: Նրանք կատարեալապէս սրբեցին կողոպտեցին այդ ճոխ և հարուստ հնօրեայ հաստատութիւնը որ միշտ խնայուած էր անցեալ բոլոր թալան-թուլանի միջոցներին, քանզի իբր մի սուրբ, առաքելահաստատ օջաղ, վանքը մեծ համբաւ էր վայելում քրդերի մօտ՝ պատկառանք և երկիւղ ազդելով նրանց: Բայց այն երանելի ժամանակներից ի վեր ամեն բան փոփոխուել էր, և էվլիւցիայի օրէնքի հիման վրայ այդ լեռնաբնակ քրդերն ալ լուսաւորուել և ազատուել էին իրանց հինաւուրց նախապաշարմունքներից, որով նըրանք հայոց սրբութեանցը ձեռք չէին տալիս: Անկարագրելի էր հայոց ահն ու սարսափը, բայց բարեբախտաբար կոտորած չեղաւ այն ատեն, անշուշտ... Սուլթան Համիդի հրամանով, որպէս նոյն տարին օսմանեան կանոնաւոր զօրքը, երբ գիշերով հրդեհեց ու լիովին թալանեց Վանի մեծ շուկան իր 1500 ապրանքով լիքը խանութներով, մինչդեռ նրանց տէրերը քաղաղաքից կէս ժամ հեռու Այգեստանի թաղերում անդորր ու խաղաղ քնում էին... շնորհիւ վեհ. Սուլթանին և ոչ մի ջարդ պատահեց... ըստ սուլթանի խիստ հրամաններին...

Երբ ամեն բան, մինչև վանքի վերջին աւելն ու ասեղն մաքրազարդուած էր Օմէր Ալան փող է հարկանել տալիս՝ հաւաքուելու և մեկնելու: Երբ քրդական ժխորը վանքից դարդակումէ, երկոտասան թաւունները ներսը մնում են և կանչելով դողդոջուն վանահայրին պահանջում են վանքի գանձը, որ թագրած է եղել. վարդապետը աղաչում, պաղատում է որ խնայեն իրեն ծերունի, ալևոր հասակին և հեռանան վանքից, քանի որ արդէն ամեն բան տարած են և ոչ մի բան էլ չէ մնացած սող վանքում: Թե՛ս պիտի լինէր վանքի գանձը, բայց եթէ՛ իր ամբողջ կահ-կարասին, որ թալանուել էր ամ-

## VI

Արեղակի սուր ճառագայթները մեր խուցի նեղլիկ լուսամուտներից ներս թափանցելով փայլուն սիւններ էին կաղմել, երբ մենք արթնացանք և խսկոյն ճանապարհ ընկանք: Ծերունի Մաթրոնը մինչև վանքի դռսի դուռը մեզ ուղեկցեց և ասորերէն լեզուով «Տէր ուղղեա» արմնջեց: Մենք ձիերներս հեծնելով հեռացանք: Ծանապարհին մենք յաճախ պատահում էինք հետևակ և ձիաւոր և ոտից զլուխ զինուած ըրդերի, որոնք խեթիւ մեզ նկատում էին և անպատճառ կը կողոպտէին զմեզ, խթէ կառավարութիւնը մեզ մի քանի կտրիճ հեծելազօրք տուած չըլինէր, որոնք լիբը հրացանները ի ձեռին առաջուց և յետևից մեզ ուղեկցում էին: Երեկոյեան մենք հասանք սուրբ Բարթուղիմոսի հինաւուրց վանքը, որ հեռուից ամրոցի նմանում էր իր հաստ պարիսպներով ու աշտարակներով. միայն սիրուն զմբեթից և բարձր զանգակատնից յայտնւում էր որ դա մի վանք էր բլուրի մի գլխին կառուցուած: Այնտեղ էր Կայծակը (Յովհ. վրպ. Բագունի) որ սիրալիր ընդունեց և հիւրընկալեց մեզ:

Մեծ սովի տարին լինելով Կ. Պոլսոյ Սովեթոյ Յանձնաժողովի կողմանէ Սբ. Բարդուղիմոսի վանքում Աղբակի որբ և անտէրունչ երեխայից համար մի պատսպարան կառուցուած էր վանքի բակի մի անկիւնում, ուր 15-20 մանչերի հետ պարպում էր Կովկասից եկած մի երիտասարդ ուսուցիչ, պ. Զաքէ, որ յետոյ դարձաւ Բագարատ վարդապետ Թէվէքիւեան: Նա մի ժամանակ Սալմասի Դէրբզ վանքի վանահայր եղաւ և Կովկասում մեր հոգևորականների ամենաշնորհալիներից, և իրենց բարձր կոչումն ու կարևոր պաշտօնը ըմբռնողներից ու ըստ այնմ վարուողներից մինը հանդիսացաւ իր եռանդուն և ազգագուտ գնահատելի գործունէութեամբ: Այն ժամանակից Հայոց Հայրիկը շատ էր սիրում այդ համեստ անձնանուէր գործիչին, այդ մի տիպար էր աշխատասիրութեան և անձնազոհ պարտաճանաչութեան: Նա Վասպուրականում, կարմրաշապիկ վարժապետ անունով, ամառ ձմեռ, տանը թէ փողոցում, ամեն տեղ և ամեն ժամանակ իր հագին ունեցած կարմիր շիլայ բլուղին պատճառով: Կարծես մի գարիբալդեան լինէր նա: Այնտեղ էր նաև Այվադեան Սահակ վարդապետը իբր փոխանորդ վանահօր, որ իր պաշտօնական հանգամանքին պատճառով միշտ Բաշկալայում պէտք էր ընակուի:

Հինաւուրց այս հոյակապ վանքի մենք ամեն կողմը ման եկանք, բայց խիստ աղքատիկ և անշուք դրութեան մէջ գտանք

ամեն բան, վասն զի անցեալ աղէտալի մեծ պատերազմի միջոցին Համիդի բուրդ բաշխողութիւնները ամբողջովին կողոպտել ու թալանել էին նրան: Կայծակը պատմեց միզ ահաւոր պատմութիւնը: Եղիազար վարդապետի վանահայրութեան օրով էր, Կրք մի օր յանկարծ 12 թռուռներ (քրդաց ազնուական դասակարգը այդպէս է կոչուում) դանազան ցեղերից հետեակ ու ձիաւոր զօրքով պաշարում են վանքը, ազատութեան ոչ մի յոյս չլինելուն վարդապետը անձնատուր է լինում պալմանաւ որ նըրանք խնայէին այնտեղ հաւաքուած հայ ժողովրդին որ վանքի անմիջապէս կից եղող համանուն գիւղից այնտեղ ապաստանել էր: Մեծ ցեղապետ և արշաւանքի հրամանատար Օմէր Ալան համաձայնուեց, և վանքի խոշոր դռները կոնակի վրայ բացուեցին նրանց առաջ: Քրդերը սովալլուկ գայլերի նման վրայ ներս խուժեցին և սկսեց անդուծ թալանը: Նրանք կատարեալապէս սրբեցին կողոպտեցին այդ ճոխ և հարուստ հնօրեայ հաստատութիւնը որ միշտ խնայուած էր անցեալ բոլոր թալան-թուլանի միջոցներին, քանզի իբր մի սուրբ, առաքելահաստատ օջաղ, վանքը մեծ համբաւ էր վայելում քրդերի մօտ՝ պատկառանք և երկիւղ ազդելով նրանց: Բայց այն երանելի ժամանակներից ի վեր ամեն բան փոփոխուել էր, և էվլիւցիայի օրէնքի հիման վրայ այդ լեռնաբնակ քրդերն ալ լուսաւորուել և ազատուել էին իրանց հինաւուրց նախապաշարմունքներից, որով նըրանք հայոց սրբութեանցը ձեռք չէին տալիս: Անկարագրելի էր հայոց ահն ու սարսափը, բայց բարեբախտաբար կոտորած չեղաւ այն ատեն, անշուշտ... Սուլթան Համիդի հրամանով, որպէս նոյն տարին օսմանեան կանոնաւոր զօրքը, երբ գիշերով հրդեհեց ու լիովին թալանեց Վանի մեծ շուկան իր 1500 ապրանքով լիքը խանութներով, մինչդեռ նրանց տէրերը քաղաղաքից կէս ժամ հեռու Այգեստանի թաղերում անդորր ու խաղաղ քնում էին... շնորհիւ վեհ. Սուլթանին և ոչ մի ջարդ պատահեց... ըստ սուլթանի խիստ հրամաններին...

Երբ ամեն բան, մինչև վանքի վերջին աւելն ու ասեղն մաքրազարդուած էր Օմէր Ալան փող է հարկանել տալիս՝ հաւաքուելու և մեկնելու: Երբ քրդական ժխորը վանքից դարդակումէ, երկոտասան թռուռները ներսը մնում են և կանչելով դողդոջուն վանահայրին պահանջում են վանքի գանձը, որ թագքրած է եղել. վարդապետը աղաչում, պաղատում է որ խնայեն իրեն ծերունի, ալևոր հասակին և հեռանան վանքից, քանի որ արդէն ամեն բան տարած են և ոչ մի բան էլ չէ մնացած սաղ վանքում. ինչ պիտի լինէր վանքի գանձը, բայց եթէ՛ իր ամբողջ կահ-կարասին. որ թալանուել էր ամ-

բողջովին: Քրդերը անողորմելի են մնում. փակում են վանքի դռները և սկսում են խուզարկել քունջ ու բուջաղ գանձը որոնելու: Շատ և երկար փնդուելուց յետոյ վերջապէս նրանց աջողովում է գտնել մի գաղտնի՝ դէպի զանգաւատան աշտարակը տանող անցք, և ոլորապտոյտ մի սանդուխից բարձրանալով ներքին՝ պահարաններում պահուած վանքի ամբողջ հարստութիւնը՝ մեծագումար ոսկի և արծաթ փող, թանկագին գոհարեղէն, ոսկեղէն և արծաթեղէն աստներ, սաղաւարտներ, եկեղեցական զարդեր, խաչեր ու մասունքներ, որոնք հինաւուրց ժամանակից այնտեղ համբարած էին, ամբողջովին դրաւում, վար. են բերում: Վարդապետը երկիւղ անելուց որ նրան այժմ անպատճառ նրանք կըսպանէին, փաղչում թագնւում է: Վանքի մեծ բակում թօռունները նստում են միասին այդ մեծ կողոպուտը մէջերին հաւասարապէս կիսել բաժնելու: Սակայն այդ բանում նրանց մէջ անհամաձայնութիւն է առաջ գալիս, ամեն մարդ ցանկանալով առեւծի բաժինը ինքը կորզել: Գնալով վէճը լուրջ կերպարանք է ստանում և փոխում է թշնամութեան, սկսում է սոսկալի ընդհարումը ընկեր-ընկերի հետ, փայլում են շողշողուն կեռ սուրերը և խանչալները, որոտում են հրացաններն ու ատրճանակները և ապա տիրում է խորը, մահուան լուռութիւն: Դուրսը եղած քրդերը կասկածելով դաւաճանութեան մասին իսկոյն խորտակում են դռները և կրկին ներս խուժում, ուր նրանց աչքին առաջ բացւում է սարսափելի, արիւնահեղ տեսարան. լոյր 12 թօռունների անշունչ դիակները ցիր ու ցան ընկած էին գետնի վրայ սփռուած ահագին գանձի շուրջը: Կարծես կատարուած էր չլուած-չտեսնուած մի աստուածային արդարութիւն և առնուած էր սրբապղծութեան ահռելի վրէժը... Քրդերը սկսում են ցաւագին ոռնալ և իրենց «վայ լէ մէն» արտասուող ողբերովը օղը թնդացնել: Յետոյ նրանք հաշտուելով կատարուած իրողութեան հետ հաւաքում են գանձը և 12 դիակները և հեռանում են յուզարկաւորութեան թափոր կազմուած:

Այստեղ անցողակի կերպով հարց է ծագում թէ ինչի են ծառայում մեր վանքերում այսպէս կուտակուած հինաւուրց գանձերը, ի՞նչի, բայց եթէ մի օր յայտնի կամ թագուն աւազակների աւարը լինելու...

«Կայծակը» մեզ առաջնորդեց վանքի ախոռը և ցոյց տուեց իր 8-ամեայ, բուն արաբական ձիւնի պէս ստիտակ հրաշալի նոյգը, որի արժէքն էր այն ատեն 300 օսմանեան ոսկի: Արաբական ձիերը նշանաւոր և յարգի են այն պատճառով որ իրենց աղնիւ ցեղի պատկանիլը դարուց ի դարս դոկումենտնե-

լրով վաւերացրած է, և հայր Բազումին մեզ ցոյց տուեց մի կտոր մագաղաթի վրայ գրուած այդ հիանալի նոյնպէս ազնուականութեան վաւերականութիւնը կնքուած և ստորագրուած ըագում արար շէյխերից և բէգերից: Երեկոյեան նա մի ձիարշաւ կատարեց ՍՈՐՕ հիւպատոսին ցոյց տալու թէ իր անզուգական ձիու ոյժն ու հունարը և թէ իր ձիավարութեան հմտութիւնը: Շատախցի ըաջ վանականը մօտենալով ազնիւ կենդանուն քնքուշութեամբ շոյեց նրա սիրուն, երկայն բաշը և վիզը, հաճուեց լայն ճակատից գորովագին և հեծնել, արշաւելն ու մեր աչքերից անհետանալը մի ակնթարթում կատարուեց: Վայժակաւ-ը իր կայծականման նոյնպէս վերայ կայծակի պէս սլացեր էր ու չկար! Մենք զարմացած, հիացած ափերերան՝ մնացել էինք: Ես յիշեցի մեր Աղա Սուրբ Սարգսի լեզենդան և սկսեցի պատմել կոնսուլին: Քիչ յետոյ հեռաւոր մի բլուրի գագաթին վրայ երևեց մեր ըաջարի ձիաւորը, ուր հետակ մը հազիւ մի ժամուց հասնել կարողանար: Ազնիւ կենդանին 8—10 բոպէի մէջ կտրել էր այդ հեռաւորութիւնը!

Ականատես

(Կը շարունակուի)

## ՀԱՋԱՐ ԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԳԻՂԵՐԸ

—Շէհերազադէ:

—Հայրիկ:

—Մեր մեծագօր Ինքնակալը լաւ տրամադրութեան մէջ է. այս հազար ու մէկ զիշերներէն ետքը բարեհաճեցաւ բաշխել քեզ կեանքդ: Ահա նորէն իրիկուն եղաւ, աղջիկս: Իր վեհափառութիւնը զրկեց զիս քեզ մօտ. այս իրիկուն ալ ան քեզ կը սպասէ: Բայց ոչ թէ մահը, այլ սէրը պիտի ըլլայ վարձատրութիւնդ:

Մեծ եպարքոսը կապոյտ մետաքսէ հանգերձանքին մէջ կանգնած էր դռան մօտ այն փոքր ապարանքին, ուր իր աղ-